Շրջակա միջավայրի նախարար
պարոն Հ. Սիմիդյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.**
   Գայանե Հովսեփյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Ջրային ռեսուրսների կառավարման վարչության պետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Արաբական Միացյալ Էմիրություններ, ք. Դուբայ՝ 2023 թվականի դեկտեմբերի 9-ից 12-ը

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   ՄԱԿ-ի՝ «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի կողմերի 28-րդ համաժողովին (COP28) մասնակցություն, ինչի շրջանակներում անցկացվում էր նաև համաշխարհային առաջնորդների գագաթաժողովը: Գագաթաժողովի նպատակն էր աշխարհի պետությունների ու կառավարությունների ղեկավարներին ընձեռել հնարավորություն՝ ներկայացնելու իրենց դիրքորոշումը և իրենց երկրի տեսլականը կլիմայի փոփոխության վերաբերյալ:
   ՄԱԿ-ի՝ «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի կողմերի համաժողովները տեղի են ունենում ամեն տարի՝ հանդիսանալով կլիմայի փոփոխության վերաբերյալ որոշումների կայացման միակ բազմակողմանի ֆորումն աշխարհում՝ աշխարհի բոլոր երկրների գրեթե ամբողջական անդամակցությամբ:
   Կողմերի համաժողովին մասնակցում էին ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի 198 կողմ երկրներից ավելի քան 154 պետության ղեկավարներ և ավելի քան 70,000 պատվիրակներ՝ այդ թվում կառավարության, հասարակության, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, բարեգործներ, երիտասարդներ, գիտնականներ, գործարարներ:

6. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված և քննարկված հարցեր.**

2023 թվականի դեկտեմբերի 11-ին մասնակցել եմ ջրային ոլորտում կարիքների և հնարավոր ներդրումների հետ կապված նիստին՝ կլիմայի ֆինանսավորման օրվա շրջանակում: Նիստի ժամանակ ներկայացրել եմ

- ինչպիսի գործընթացներ են իրականացվում Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման համար,
- ջրային ոլորտում կլիմայի փոփոխության հետ կապված ինչպիսի օրենսդրական քայլեր են իրականացվել և նախատեսվում
- ինչպիսի ներդրումներ կան ջրային ոլորտում՝ կապված կլիմայի փոփոխության հետ
- ջրային ոլորտում առկա բացերը, ներառյալ կլիմայի փոփոխությունը
- ֆինանսական աջակցության շնորհիվ հնարավոր կլինի իրականացնել Ջրային ոլորտում կլիմայի հարամարվողականության ծրագրով, ինչպես նաև ջրավազանային կառավարման պլաններով նախատեսված միջոցառումները, որոնք էլ կնպաստեն ջրային ռեսուրսների պահպանությանը, արդյունավետ կառավարման և կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացմանը:

*Գործուղվող* *Գայանե Հովսեփյան*

*22.12.2023թ.*